

ՀՈԳԵՎՈՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ

Նախաձեռնությամբ Ռումանիո Թեմական Խորհրդին և հովանավորությամբ Ռումանիո Թեմի Առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի, սույն թվականի մայիսի 15-ի երեկոյան Բուխարեստի առաջնորդանիստ «Գաբրիել և Միքայել Հրեշտակապետաց» Մայր տաճարում, կազմակերպվեց հոգևոր համերգ՝ ի նպաստ դեկտեմբեր 7-ին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի աղետյալներին:

Հոծ բազմությամբ և բազում հրավիրյալներով լցվեց եկեղեցին: Ներկա էին Ռումանիո Հռոմեա-Կաթոլիկ Եկեղեցու Պետ Գերաշնորհ Իոան Ռոպու եպիսկոպոսը, կրոնից նախարարության պաշտոնական ներկայացուցիչը, այլ կրոնական հարանվանությանց ներկայացուցիչներ, հանրածանոթ արվեստագետներ, գրողներ և հայ հավատացյալներ, նաև մի խումբ հայեր, որոնք Մայր Հայրենիքից հյուրաբար գտնվում էին Ռումանիայում:

Արամայիս վարդապետ Ծլոնկյանը կատարեց բացումը հոգևոր համերգի՝ հրավիրելով բոլորին հոտնկայս և լռությամբ հարգել զոհվածների հիշատակը:

Համերգի ծրագիրը կազմված էր Կոմիտաս վարդապետի, Սրապյանի, Եկմալյանի և եկեղեցվույս խմբավար Կ. Հարությունյանի ստեղծագործություններից, մեղեդիներից, շարականներից և տաղերից: Դրանց մեկ մասը կատարվեցին առաջին անգամ: Այսպես էր Կոմիտաս վարդապետի՝ «Ով է որպէս»-ը, «Իսկ ի Տօնս ծնընդեան» եւ «Տէր Կեցո»-ն, կամ Կ. Հարությունյանի՝ «Վարդան»-ը, «Սուրբ, Սուրբ»-ը կամ «Խնկի ծառին»:

Բուխարեստի Մայր եկեղեցվո երգչախումբը, խմբավարությամբ երաժշտագետ և երգահան Կ. Հարությունյանի, ունենալով իր կազմին մեջ բազմաթիվ երգիչ-երգչուհիներ Ռումեն օպերայի, կարողացավ լավագույն ձևով և բարձր վարպետությամբ ներկայացնել կազմված ծրագիրը: Իր մասնակցությամբ բարձր գնահատանքի արժանացավ հայազգի Ռումեն օպերայի բազմավաստակ մենակատար Դավիթ Օվանեսյանը:

Համերգը ավարտվեց Քրիստոսի հարության հաղթական մեղեդիով:

Թեմիս առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը իր փակման խոսքին մեջ գնահատանքի, հույսի և կյանքի հուզիչ կոչով արտահայտեց Իր զգացումները, ընդգծելով, թե հայ ժողովրդի կյանքին մեջ լացը և ցավը Աստվածային նախախնամությամբ փոխակերպվեցին հաղթական երգի և մեղեդիի, որ առաջնորդեցին մեր ազգը դեպի կյանքի հարության հույսը:

ԹՂԹԱԿԻՑ